ուրինակ բարեաց ձեզ ամենեցուն. ինքն արասցէ և ապա զձեզ ուսուսցէ սրբութեամբ, արդարութեամբ, խոնարհութեամբ, երկիւղիւ, սիրով առ Աստուած և առ ընկերս. եղբայրսիրութեամբ, աղքատսիրութեամբ, ողորմածութեամբ և աղաւթիւք, լինել այցելու որբոց և այրեաց՝ և ամենայն կարաւտելոց կարեկից սիրովն Քրիստոսի: Կոչեսցէ զարժանաւորսն և զկատարեալսն ի կարգ և յաստիճան կէս սարկաւագութեան, սարկաւագութեան և քահանայութեան: Կալցի և հրամանաւս մեր ի վերա ձեր իշխանութիւն առաքելական, կապել և արձակել յերկինս և յերկրի: Զմեղուցեալսն և զապըստամբեալսն յաւրինացն Աստուծոյ և ի կանոնաց սրբոց հարցն՝ կշտամբել և յանդիմանել, և ըզզղջացեալսն ընդունել ապաշխարութեամբ: Որով և դուք ամենեքեան առ ի դմանէ հովեալք և արածեալք ի վայրս դալարոյ առաքինութեան, և ի ջուր հանգստեան պատուիրանացն Աստուծոյ, զաստուածապատիւ և զառաքելաշնորհ արքեպիսկոպոսդ ձեր զՏէր Յոհանէսդ՝ մեծավ պատուով և յոյժ սիրով ընկալարուք, որպէս զհրեշտակ Աստուծոյ՝ և որպէս զառաքելական այր. և ամենայն հոգեւորական խրատոյ դորա՝ որ ի շահ և յաւգուտ է ոգոց ձերոց՝ հնազանդութեամբ ունկնդիր լերուք: Այլ և զամենայն կանոնեալ հաս և զիրաւունս զոր պարտիք տալ Աստուծոյ՝ բաժին աթոռո, զհաս տանց քահանայից և զամենայն ընտանեաց նոցա, զերախայրիս կալոց և զհնձանաց, զտէրունականս և զսրբանուէրս, զիրաւունս մատաղաց կենդանեաց և զյանկարծամահից, և զամենայն իրաւունս կենաց և մահու, լիով անթերի տուք ի ձեռս դորա զուարթ և առատ սրտիւ, որպէս զուարթառատ սիրէ Աստուած: Եւ մի՛ ոք իշխեսցէ հակառակիլ սըմա, կամ հրամանիս մեր՝ և արգելցէ յիրաւանց տալո կամ խորեսցէ կամ յայլազգիք անկանի և ուժ հասուցանէ Տէր Յոհանէսիդ: Իսկ որ ոք հակառակ լիցի մեր հրամանիս, կամ սիրեցեալ որդոյս մեր Տէր Յոհանէսիդ, նայ այնպիսի հակառակողն առցէ յԱստուծոյ զանէծսն Կայէնի, զմասն Յուդայի, և զխաչահանուացն, նայ եւ զպատիժսն Կորխա և զԴադանայ: Որով աւրհնեալքն ի Տէր Յոհանէս ի պատուելի արքեպիսկոպոսէդ ձերմէ, աւրհնեալ եղիցին յԱստուծոյ և ի մէնջ. կապեալքն և որոշեալքն՝ ի նմին միասցեն մինչև զղջասցին, և առցեն զարձակումն ի Տէր Յոհանէսէդ, կամաւ և ոչ ի հարկէ կամ բռնութեամբ,

Վասն որո՝ ի մտանել դորա և զրաւորական աւրհնութեան հրամանիս մերո առ ձեզ և սուրբ մեռոնիս՝ ի ձեռն Ներսէս ավագ սարկավագին և եկիրակիդ մերոյ, իջցէ և շնորհք ողորմութեանն Աստուծոյ յերկնից ի վերա ձեր եաւթընպատիկ, և լցուսցէ զձեզ ամենայն հոգեւոր և մարմնավոր բարութեամբ. Բարձցէ ի ձէնջ զամենայն ցասումն, զպատուհաս և զտարաժամ մահ. Տացէ ձեզ շինութիւն, անդորրութիւն և խաղաղութիւն. Բուսոց և տնկոց և ամենայն անդէոց ձեր՝ այճողութիւն և քաղցր պտղաբերութիւն. պաճարեղէն անասնոց ձեր անսղալ ծնընդականութիւն. և ամենայն բարեաց ձեր՝ լիութիւն և առատութիւն: Արասցէ և զբանաւոր երկիրդ ձեր՝ գործնականս և արդիւնականս. գործել զարդարութիւն և զամենայն զովելի տեսակս առա-